1(25) 2012

ՀՏԴ 37.01-053.4 *Մանկավարժություն*

ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԴՊՐՈՑԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼԸ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

Ա.Տ.Ենգիբարյան

21-րդ դարի նախաշեմին հայեցի մանկապարտեզի մանկավարժ-դաստիարակչուհու վրա դրված է պատասխանատու և պատվավոր խնդիր՝ ձևավորել ապագա դպրոցականի աշխարհայացքը, բնավորության գծերը, նրանց զինել բնության և հասարակության զարգացման օրենքների հիմունքների վերաբերյալ անհրաժեշտ գիտելիքներով, պատրաստել նրանց նոր դպրոց մտնելուն:

Նշենք, որ երեխաների դաստիարակությունն ու ուսուցումը մանկապարտեզում բարդ ու լուրջ գործ է, պահանջում է համբերություն և կամքի ուժ, խելամիտ մոտեցում դեպի յուրաքանչյուր երեխա և առավելագույնս ավագ խմբի երեխաները ամբողջությամբ վերցրած: Դրա համար մանկապարտեզի մանկավարժական կոլեկտիվը պետք է առաջին հերթին հանդիսանա որպես կենդանի օրինակ՝ նրանցից յուրաքանչյուրն իր մեջ պետք է մարմնավորի անձի լավագույն գծերը, քանի որ դաստիարակության և ուսուցման գործընթացի հաջողությունը մեծ չափով կախված է դաստիարակչուհուց, որը գործ ունի դպրոցին նախապատրաստելու խմբերի երեխաների հետ, հատկապես նրա պատասխանատվության զգացումից նպատրաստակամությունից: Մանկապարտեզի դաստիրակչուհիներից է կախված հատկապես ավագ խմբի երեխաների ուսուցման և դաստիարակության կայունությունն և նրանց անձնավորության բազմակողմանի զարգացումը:

Մեր ուսումնասիրություններն ու հանդիպումները Ստեփանակերտի թիվ 1 մանկապարտեզի ավագ խմբերի մի շարք դաստիարակչուհիների և երկար տարիների մանկավարժական աշխատանքի փորձ ունեցող մանկապարտեզի վարիչ Լիդա Սիմոնյանի հետ, պարզ դարձավ, որ մանկապարտեզում կուտակվել է բավականին առաջավոր փորձ, որը մեր ուշադրության է հրավիրել հատկապես մոտիկից ծանոթանալով անվանի մանկավարժ-դաստիարակչուհիներ Ժաննա Մարգարյանի, Էմմա Անտոնյանի, Անուշ Գաբրիելյանի աշխատանքային փորձին, որը մեզ հաջողվել է խորը ուսումնասիրելու: Մեր մասնագիտական փորձուսուցման հանդիպման ժամանակ մանկապարտեզի վարիչ Լիդա Սիմոնյանը նշեց, որ «Մենք լուրջ ուշադրություն ենք դարձնում դաստիարակչուհիների որակի, նրանց մանկավարժական, տեսական, պրակտիկ կարողությունների ու հմտություններ բարձրացման վրա», դրա համար նրանց համար պարբերաբար կազմակերպվում է սեմինար պարապունքներ, առանձնապես այսօր, երբ բարեփոխվող դպրոցի և մանկապարտեզի առջև դրված բազմապիսի լուրջ խնդիրներ: Մանկապարտեզի փորձված և մանկավարժական գործի վարպետ դաստիարակչուհիները, որոնք զգալի թիվ են կազմում մեր մանկապարտեզում, սիստեմատիկորեն հանդես են գալիս այդ սեմինարներում և սկսնակ դաստիարակներին ծանոթացնում ավագ խմբի երեխաներին դասավանդելու, նրանց նկատմամբ մանկավարժական մոտեցում ունենալու արվեստին և վարպետությանը:

Մանկապարտեզի ավագ խմբերի դաստիարակչուհիների գիտական մանկավարժական մակարդակը բարձրացնելու ուղղությամբ տարվող աշխատանքը չի սահմանափակվում միայն սեմինար-պարապունքներ կազմակերպելով: Մեր ուսումնասիրությունների ժամանակ պարզվեց, որ հարուստ փորձ է կուտակվել ևս մեկ ուրիշ ուղղությամբ: Սիստեմատիկաբար կատարվող պարապմունքների վերլուծությունների ժամանակ պարզվում է, թե որ դաստիարակչուհի գիտական ու մեթոդական կարգի ինչպիսի հաջողություններ կամ թերություններ ունի: Նման դեպքերում, հատկապես առանձին դաստիարակչուհիների աշխատանքներում թերություններ հայտնաբերելուց հետո, նրանց օգնության են հասնում փորձված դաստիարակչուհիները: Այստեղ դաստիարակչուհիներին օգնելու լավագույն ձևերից մեկը փոխադարձ դասալսումներն են, որ մանկապարտեզում տարվում են պլանավորված ձևով:

Մանկապարտեզում վաղուց ավանդույթ է դարձել, որ որոշ դաստիարակչուհիներ իրենց երեխաներին հասցնում են ավագ խումբ և նախապատրաստում դպրոցին: Նշենք, որ օրինակելի ավանդույթ է: Տարիներ շարունակ նույն երեխաների հետ աշխատող դաստիարակչուհին, բնականաբար, ավելի լավ և բազմակողմանի է ճանաչում իր երեխաներին, այդ հանգամանքը խոր չափով օգնում է ամրապնդելու գիտակցական կարգապահությունը և բարձրացնելու ուսուցման որակը անցնելով դպրոցի առաջին դասարան: Այդ հաստատում են դպրոցի տարրական դասարանների դասվարներ Է. Բալայանը…..:

Ստեփանակերտի թիվ 1 մանկապարտեզում ուսանելի շատ բան կա, մանկապարտեզի բակում դաստիարակչուհիների հետ քայլելիս, նկատեցի այն փաստը, որ ավագ խմբի երեխաները դաստիարակներին հանդիպելիս դանդաղեցնում են իրենց քայլերը, որպեսզի հանդիպեն դաստիարակչուհիներին և բարևեն: Հիշենք, որ ավագ նախադպրոցականի վերաբերմունքի մեջ զգացվում է սեր և հարգանք դեպի դաստիարակչուհին, դեպի մարդու անձնավորությունը:

Նշեմ, որ այսքան տարիների իմ մանկավարժական փորձին գումարվեց ևս մի առաջավոր փորձ: մանկապարտեզի ավագ խմբի դաստիարակչուհի Ժաննա Մարգարյանի հետ մտնելով խումբ, դաստիարակչուհին չթույլատրեց անմիջապես նստել երեխաներին, այլ դիտում էր նրանց, երեխաներին: Մի երկու րոպեից հետո երեխաները թույլատվություն ստացան նստելու: Ինձ մոտ հարց առաջացավ, սակայն տվյալ պահին չտվեցի, երբ ավարտվեց «մայրենի լեզու» առարկայից պարապմունքը, հարցրեցի, թե որն էր այդ երկու րոպեի գաղտնիքը: Դաստիարակչուհին սիրալիր պատասխանեց: Ասեմ, որ դրա գաղտնիքը կայանում էր նրանում, որ յուրաքանչյուր երեխա այդ ժամանակ աշխատում է ցույց տալ իր զգաստությունը: Դրա մեջ կա ինչ-որ հանդիսավորություն, կարգապահություն և դաստիարակության կարևոր պահ: Այդ ավելի ցայտուն է դառնում պարապմունքի ավարտից անմիջապես հետո, նկատեցի, որ ոչ ոք չշարժվեց տեղից մինչև ես չհայտարարեցի, որ պարապմունքն ավարտված է և «Ցտեսություն» ասելուց հետո մենք դուրս եկանք խմբից:

Այսպիսով, բազմաթիվ միջոցներով դաստիարակչուհուն հաջողվեց կազմակերպել երեխաների համոզմունքները, վարքը, նրանց մեջ արմատավորել օգտակար սովորույթներ: Դաստիարակչուհին երեխաների մեջ խրախուսելով լավը, ամեն օր նա օգնում է նրանց ազատվել բնավորության վատ գծերից, սովորույթներից:

Ավագ խմբի դաստիարակչուհի Ժ. Մարգարյանի հոգատարությունը իրենց նկատմամբ զգում են նրա երեխաները, դա ևս մեկ անգամ ջերմացնում է նրանց հարաբերությունները, ներքին շնորհակալական և երախտագիտական զգացմունքներով լցնում նրանց սրտերը:

Մանկապարտեզի ավագ խմբի դաստիարակչուհի Էմմա Անտոնյանի մոտ պարապմունքները լավ կազմակերպելը, ուսուցման և դաստիարակության գործընթացը միասնաբար տանելը եղել և մնում են դաստիարակչուհու հիմնական խնդիրներից առաջնայինը: Սակայն նշեմ, որ մանկապարտեզի երեխաների դաստիարակության և ուսուցման գործում դաստիարակչուհին չպետք է հենվի մշտական , անփոփոխ մեթոդների և ձևերի վրա: Միևնույն մեթոդի օգնությամբ չի կարելի բոլոր դեպքերում ապահովել ուսուցման և դաստիարակչական ներգործության հաջողությունը: Այդ իսկ պատճառով էլ այսօրվա ուսուցիչ-դաստիարակչուհու առաջ խնդիր է դրված այդ գործընթացին մոտենալ ստեղծագործաբար:

Մանկապարտեզում օրինակելի է այն, որ դպրոցին նախապատրաստելու գործը գտնվում է այդ կոլեկտիվի ուշադրության և հոգատարության կենտրոնում: Նրանք որոշել են համատեղ ջանքերով հասնել այն բանին, որ այդ ավագ խմբերում տարվող ուսուցման և դասիարակության հարցերը գտնվեն բարձր մակարդակի վրա, որից կախված կլինի ողջ մանկապարտեզի հեղինակությունը, որպեսզի ոչ մի ակնթարթ երեխան չմնա մանկավարժական հսկողությունից դուրս, որ մանկապարտեզում նրա ստացած գիտելիքներն ու դաստիատակչական որակները ամրապնդվեն ընտանիքում և ապա օգտակար լինեն դպրոցում, քանի որ երեխայի համար դպրոցական ուսումնառության սկիզբը երեխայի զարգացման օրինաչափ, միևնույն ժամանակ ըստ մեզ, ճգնաժամային շրջան է, որին պատրաստ լինելու աստիճանով է պայմանավորված նրա ուսման հաջողությունների հետագա ընթացքը:

Քանի որ հասարակության զարգացման հետ համատեղ փոխվում են հանրակրթության շեշտադրումները և ծրագրային բովանդակությունը, ապա վերանայման են ենթարկվում նաև նախադպրոցականին դպրոցական ուսումնառությանը նախապատրաստելու պահանջները: Այդ տեսակետից լուրջ աշխատանք է տարվում մանկապարտեզի ավագ խմբերի դաստիարակչուհիների գիտատեսական և գիտամեթոդական մակարդակի բարձրացման ուղղությամբ: Ինչ խոսք կարող է լինել մանկապարտեզի կադրերի ինքնակրթության, ուսումնադաստիարակչական աշխատանքների մակարդակի բարձրացման մասին, եթե դաստիարակչուհիները չկարողանան սիստեմատիկորեն ուսումնասիրել մասնագիտական գրականություն, իրազեկ չլինեն նոր բարեփոխվող կրթական համակարգի մանկավարժահոգեբանական արդի պահանջներին:

Ուսումնասիրելով Ստեփանակերտի թիվ 1 պետական մանկապարտեզի դաստիարակչուհիների հետ տարվող աշխատանքները, ակնհայտ երևում է, որ այստեղ հոգ է տարվում մայրենի լեզվով մասնագիտական գրականության ստեղծմանը: Ի դեպ նշենք, որ մանկապարտեզի դաստիարակները մի քանի տարի առաջ զրկված են եղել իրենց վերաբերվող հարցերի վերաբերյալ ինքնուրույն ուսումնասիրություններ կատարելու հնարավորությունից, «Լուսարար» թերթը նույնպես էական օգնություն չի ցուցաբերել այդ հարցում: Տարվա ընթացքում մեկ-երկու համարներում են զետեղվել նախադպրոցական ուսուցմանը և դաստիարակությանը վերաբերող հարցեր: Ժամանակն է, որ

«Լուսարար» թերթը ունենա հատուկ էջ, որտեղ պարբերաբար լուսաբանվեն հանրապետությունում գործող լավագույնների փորձի ուսումնասիրմանը և տարածմանը: Նշենք, որ որպես մոթոդական ուղեցույց այդ ուղղությամբ վերջին տարիներին լուրջ ուշադրություն է դարձրել ԼՂՀ ԿԳ նախարարության կողմից մանկապարտեզներին ապահովելով ուսումնական ծրագրեր և նոր գրականություն: ԿԳ նախարարության բաժնի միջոցով սիստեմատիկ մանկապարտեզի աշխատողներին է հասցվում ինչպես թարգմանված, այնպես էլ հեղինակային մի շարք ձեռնարկներ: Նրանց նախաձեռնությամբ և աջակցությամբ ուսումնասիրվում է ԼՂՀ մանկապարտեզների առաջավոր դաստիարակների փորձը և ավագ խմբերի երեխաների ուսուցման և դաստիարակության հետ կապված բազմաթիվ այլ հարցեր: Այսպիսի առաջավոր պորձերի ուսումնասիրման գործում կօգնի դաստիարակներին ճիշտ ուղղություն ցույց տալու երեխայի ընդհանուր վերաբերմունքը ուսուցման գործընթացին, գիտակցաբար սովորելու ցանկությունն, առանձնապես նրանց սոցիալապես պատրաստելու դպրոցի կյանքին: Այս խնդիրներն առավել կարևորվում են այսօր, երբ երեխաների զգալի մասը դպրոց են մտնում առանց մանկապարտեզ, այսինքն՝ զուրկ են հասակակիցների հետ հաղորդակցվելու և համագործակցելու հնարավորությունից, հետևաբար երեխայի սոցիալ-հոգեբանական նախապատրաստումը դպրոցին ենթադրում է այս ուղղությամբ մանկապարտեզում տարվող մանկավարժահոգեբանական բոլոր աշխատանքների միասնությունն և փոխպայմանավորվածությունը:

Երեխաների քանակը դասարանում	Մանկապարտեզ հաճախող երեխաներ			Մանկապարտեզ չհաճախող երեխաներ		
զարգ. մակարդակ	միջակ	լավ	գերազանց	միջակ	լավ	գերազանց
1.դաս.	5	11	8	1	1	
2.դաս.	3	14	6	2	1	
3.դաս.	4	11	10	2	2	1
4.դաս.	2	5	5	1	6	4

Գրականություն

1. Ս. Ա. Մարության, Ա. Մ. Դալաքյան «Նախադպրոցական մանկավարժություն», Երևան, 2005:
2. Է. Ա. Մարության «Հասակակիցների հետ հաղորդակցման հմտությունների զարգացումը նախադպրոցական տարիքում», Նախաշավիղ 1-2, 2004:
3. Венгер Л. А. «Готов ли ваш ребенек к школе», «Знание», 1994.
4. Козложа С. Я., Человек: программа приобщения ребенка к социалному миру, «Дошкольное воспитание», 1996, N 1.
5. Титов В. А., “Дошкольная педагогика”, Москва, 2002.

Подготовка детей к школе в детском саду.

А.Т. Енгибарян

Резюме

На педагога-воспитателя возложены ответственные права и обязанности в формировании мировоззрения будущего школьника, черт его характера. Эта проблема наиболее актуальна сегодня, когда большая часть детей поступает в школу без посещения детских садов, следовательно социально-педагогическая подготовленность к школе предполагает взаимообусловленность всех видов психолого-педагогических работ.

The preparation of children to school in the kindergarden.

A.T.Yengibaryan

Summary

The teacher-tutor has a responsibility in formation of outlook of future schoolchildren. This task is most actual today when the most part of children arrives in school without visit of kindergartens, therefore social and pedagogical readiness to school assumes the unity and interdependence of all works connected with it.